ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<29>> դեկտեմբերի 2012թ. N 62

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի N145 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ԿԵՏՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի վեցերորդ մասով.

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2008 թվականի նոյեմբերի 4-ի <<Մարզում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը ըստ բնագավառների համակարգման և բաշխման մասին>> N145 կարգադրության 3-րդ կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2012 թվականի օգոստոսի -ի
N62 կարգադրության

<<Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2008 թվականի նոյեմբերի 4 -ի
N145 կարգադրության

Ըստ բնագավառների ծառայությունների գործունեության համակարգում և բաշխում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Կրթության, տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչություն համակարգման և անձնակազմի կառավարման բնագավառներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Լ. ՄՈՒՐԱԴՅԱՆ՝

Առողջապահության և սոցիալական ապահովության, սոցիալական ծառայությունների, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Դ. ՍԱՄՍՈՆՅԱՆ՝

Գյուղատնտեսության և բնապահպանության, հողաշինության և հողօգտագործման, մշակույթի, սպորտի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Մ. ՔԱՐՏԱՇՅԱՆ՝

Քաղաքաշինության, տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝

Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման, քարտուղարության, իրավաբանական, զարգացման ծրագրերի և վերլուծության, ներքին աուդիտի, անձնակազմի կառավարման, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բնագավառներ>>:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*